Հ-63

# ՆԵՐՍԻՍԵԱՆ

## ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ

ՀԱՄԱՌՕՏ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

*Կարդացուած փետրուարի 14-ին 1897-ում.*

37
Հ-63

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի, Նիկոլ., տ. 21.
1897

ՍՏՈՒԳՎ Ծ Է
1952 Թ.

97 г

## I.

$189^5/_6$ ուս. տարուայ սկզբում, նորեկ աշակերտների քննութիւններից առաջ, դպրոցում կային ընդամենը 396 աշակերտ։ Օգոստոսի 22-ից սկսուեցին թէ վերաքննութիւնները և թէ նորեկների ընդունելութիւնը։ Նորեկների կողմից ներկայացուեցին 180 խնդիր ընդունելութեան համար, սակայն խնդրատուներից քննութեան ժամանակ բաւարար թուանշաններ ստացան և ընդունուեցին 129 հոգի, իսկ 51-ը՝ մերժում ստացան։

Դեռ ուսումը չսկսուած՝ նոր ընդունուածներից 35 հոգի դուրս գնացին, երևի ուրիշ դպրոցներ մտնելու համար։

Այդպիսով ուսումնական տարուայ սկզբում աշակերտների ընդհանուր թիւն էր 490, որոնցից 396-ը հին աշակերտներ էին, իսկ 94-ը—նոր մտած։

Այդ թուից ուսումնական տարուայ ընթացքում հեռացել են դպրոցից 23 աշակերտ, որոնցից 19 հոգի դուրս են գնացել իրանց յօժար կամքով, իսկ 4 հոգի արձակուել են վատ վարքի պատճառով։ Յունուարին ընդունուեց մի նոր աշակերտ։

Ուրեմն տարուայ վերջը դպրոցում կային ընդամենը 468 աշակերտ։

Հաշուետուութեան տարում դպրոցը ունէր 2 պատրաստական և 6 հիմնական դասարաններ։ Բոլոր դասարանները, բացի Ե և Զ, ունէին զուգընթաց բաժանմունքներ։ Այդ

պիսով դասարանների ընդհանուր թիւը 14 էր, որոնց մէջ հետևեալ թուով աշակերտներ կային.

| | | | |
|---|---|---|---|
| Ա և Ա | զուգ. պատրաստակ. դասար. | 82 | աշակերտ |
| Բ և Բ | » » » | 99 | » |
| Ա և Ա | » հիմնական դասարան | 71 | » |
| Բ և Բ | » » » | 56 | » |
| Գ և Գ | » » » | 55 | » |
| Դ և Դ | » » » | 43 | » |
| Ե | » » » | 40 | » |
| Զ | » » » | 22 | » |
| | Գումար | 468 | աշակերտ |

---

Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս թէ ո՛րտեղացի էին մեր աշակերտները՝

| | | | |
|---|---|---|---|
| Թիֆլիզ քաղաքից . . . . | 175 | կամ | 37 % |
| Թիֆլիզի նահանգից . . . | 112 | » | 23 » |
| Երևանի » . . . | 73 | » | 15 » |
| Գանձակի » . . . | 64 | » | 13 » |
| Քութայիսի » . . . | 3 | » | 1 » |
| Բագուայ » . . . | 1 | » | 0,2 » |
| Դաղստանից . . . . | 1 | » | 0,2 » |
| Ղարսի վիճակից . . . . | 7 | » | 1,5 » |
| Հիւսիս. Կովկասից, Ղրիմ և Բեսար. | 8 | » | 1,7 » |
| Տաճկաստանից . . . . | 16 | » | 3,4 » |
| Պարսկաստանից . . . . | 8 | » | 1,7 » |

Այսպիսով մեր աշակերտների մեծամասնութիւնը Թիֆլիզից և Թիֆլիզի նահանգից էին (60 %)։

Գաղափար տալու համար, թէ աշակերտները Թիֆլիզի որ թաղերումն էին աւելի խմբուած ապրում, առաջ ենք բերում հետևեալ տեղեկութիւնները.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հալաբարում ապրում էին . . | 96 | կամ | 20 | % |
| Մողնու, Կողոլ և Քարափի թաղերում | 100 | » | 21 | » |
| Տափի թաղում . . . . | 46 | » | 10 | » |
| Կուկիայում և Զուղուրեթում . . | 36 | » | 8 | » |

Աշակերտների մնացած մասը ցրուած էր քաղաքի զանազան մասերում։ Վերոյիշեալ աղիւսակից երևում է, որ սխալ է այն կարծիքը, թէ մեր աշակերտների մեծամասնութիւնը ապրում է Հալաբարում. ըստ այս աղիւսակի Հալաբարում ապրում է մեր աշակերտների միայն $^1/_5$ մասը։

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս, թէ ինչ առաջադիմութիւն է եղել զանազան դասարաններում։

| Դասարաններ | Աշակերտ. թիւը | Փոխադրուել են | Մնացել են |
|---|---|---|---|
| Ա պատրաստ. դաս. | 41 | 34 կամ 83 % | 7 կամ 17 % |
| Ա զուգ. պատր. | 41 | 26 » 63 » | 15 » 37 » |
| Բ պատր. դաս. | 51 | 41 » 80 » | 10 » 20 » |
| Բ զուգ. պատր. | 48 | 30 » 83 » | 18 » 17 » |
| Ա հիմնակ. դասար. | 38 | 26 » 68 » | 12 » 32 » |
| Ա զուգ. » | 33 | 24 » 73 » | 9 » 27 » |
| Բ հիմնակ. » | 28 | 18 » 64 » | 10 » 36 » |
| Բ զուգ. » | 28 | 23 » 82 » | 5 » 18 » |
| Գ հիմն. » | 29 | 21 » 72 » | 8 » 28 » |
| Գ զուգ. » | 26 | 19 » 73 » | 7 » 27 » |
| Դ հիմն. » | 22 | 19 » 86 » | 3 » 14 » |
| Դ զուգ. » | 21 | 19 » 90 » | 2 » 10 » |
| Ե հիմն. » | 40 | 35 » $87^1/_2$ » | 5 » $12^1/_2$ » |
| Զ » » | 22*) | 18 » 82 » | 2 » 9 » |

*) Զ դասատան երկու աշակերտի հարցը դեռ անորոշ է։

Վերև մենք ցոյց տուինք զանազան դասարանների աշակերտների առաջադիմութիւնը։ Իսկ ընդհանրապէս աչքի առաջ ունենալով բոլոր աշակերտներին՝ առաջադիմութիւնը արտայայտւում է հետևեալ թւերով.

Դպրոցի 468 աշակերտից փոխադրուել
և աւարտել են . . . . . 353 հ. 75,4%
Մնացել են միևնոյն դասարաններում . 113 » 24,19

---

Որդեգիրների առաջադիմութիւնը անհամեմատ աւելի մեծ էր.

25 որդեգրից փոխադրուել են 22 հոգի կամ 88 %
մնացել են 3 » » 12 »

*Աշակերտների վարքը։*

Նկատելով տարուայ սկզբից, որ դպրոցում դիսցիպլինան թոյլ է, վարչութիւնը աշխատել է միջոցներ ձեռք առնել դիսցիպլինան վերականգնելու համար։ Շատ աւելի աչքի էր ընկնում դասերից խուսափելու սովորութիւնը։

Այդ վատ սովորութեան առաջն առնելու համար, ցուցակագրւում էին բացակայող աշակերտները և ըստ կարելոյն վարչութիւնը աշխատում էր տեղեկութիւններ ժողովել նրանց բացակայութեան պատճառների մասին։

Դասերից խուսափելուն նպաստում էր մի հանգամանք ևս, այն է՝ պոստատուն գնալը. աշակերտները դրամական կամ ուրիշ գնահատուած ծրարներ ստանալու համար ստիպուած էին գնալ պոստատուն, ուր նրանք ժամեր էին կորցնում մինչև որ կստանային ծրարը։ Այդ անյարմարութեան առաջն առնելու համար դպրոցիս վարչութիւնը, համաձայնութիւն կայացնելով պոստատան պաշտօնեայի հետ, ինքն էր ստանում այդ ծրարները դպրոցի ծառայի ձեռքով և բաժանում աշակերտներին, որոնք ստորագրում էին մի առանձին տետրակում։

Մի տարուայ փորձը ցոյց տուեց այդ միջոցի օգտաւէտութիւնը։

Աշակերտների վարքը արտայայտւում էր հետեւեալ թուերով։

440 աշակերտ վարքից ստացել են 5
22 » » » 4
2 » » » 3

Ուրիշ խօսքով վարքից 5 ունեցողները կազմում էին աշակերտների . . . . . . . . $94\%$
4 ունեցողները . . . . $4^1/_2\%$
3 ունեցողները . . . . $0,4\%$

*Բացակայողներ*։ Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մեր դպրոցում անցեալ տարուայ ընթացքում ամեն մի աշակերտի վրայ միջին թուով ընկնում էր—46 բաց թողած դաս։

Կովկասի պետական դպրոցներում, ինչպէս ցոյց է տալիս հրատարակուած պաշտօնական տեղեկագիրը, միջին թուով ամեն մի աշակերտի վրայ ընկնում է 40—41 բաց թողած դաս։ Բայց չը պէտք է մոռանալ, որ մեր աշակերտների կեանքի պայմանները վերին աստիճանի աննպաստ են։ Առաջ բերենք այդ աննպաստ պայմաններից մի քանիսը.

1. Աշակերտներից շատ շատերը չափազանց հեռու են ապրում դպրոցից.

2. Տատ աննպաստ պայման է և մեր աշակերտների ծայրայեղ չքաւորութիւնը.—այս հանգամանքը քաջ ծանօթ է ամենքին։ Մանաւանդ տուժում են բարձր դասարանների աշակերտները և վերջիններից մանաւանդ ձեմարանի նախկին աշակերտները, որոնք ըստ մեծի մասին զուրկ են ապրուստի միջոցներից։

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԴԱՍԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Աշակերտների զարգացման աստիճանը բարձրացնելու համար կազմուել են գրականական երեկոներ։ Մինչև $189^5/_6$ ուսումնական տարին, ինչպէս յայտնի է, գրականական երեկոները կայանում էին միայն մի ուսուցչի ղեկավարութեամբ։ $189^5/_6$ տարուայ ընթացքում գրականական երեկոները տեղի էին ունենում ոչ թէ մի ուսուցչի, այլ մի խումբ, գրականութիւն և պատմութիւն ուսումնասիրած ուսուցիչների ղեկավարութեամբ։ Այսպիսով մի կողմից աշխատանքը բաժանւում էր և չէր ծանրանում մի ուսուցչի վրայ, միւս կողմից հնարաւոր էր լինում երեկոների նիւթը բազմակողմանի դարձնել։

Հետևեալ խնդիրներն են եղել նիւթ գրականական երեկոների։

1. Քննադատութիւն Սունդուկեանի «Պեպօ» գրուածքի. —ղեկ. ուսուցիչ պ. Ս. Լիսիցեան։

2. Քննադատութիւն «Լեռնի վերջը» Սմբատ Շահազիզեանի գրուածքի. —ղեկ. ուս. պ. Լ. Մանուէլեան.

3. Փաւստոս Բիւզանդացի և նրա իդէալները, —ղեկավարող ուսուցիչ պ. Ս. Մալխասեան։

4. Հայ հեքեաթները և նրանց բնաւորութիւնը. —ղեկավարող ուսուցիչ պ. Ս. Մալխասեան։

5. Վերածնութեան դարի մասին. —ղեկ. ուս. պ. Յակ. Քոչարեան։

6. «Դաւիթ և Մհեր» քննադատութիւն, ղեկ. ուս. պ. Ս. Լիսիցեան։

Ընդամենը եղել են վեց գրականական երեկոներ։ Թէ շարադրութիւն գրողները և թէ ընդդիմախօսները լինում էին բարձր դասարանների աշակերտները։ Այդ երեկոների մասին ընդհանրապէս կարելի է ասել, որ նրանք մեծ հետաքրքրութիւն էին շարժում աշակերտների մէջ։ Բայց միւս

կողմից չի կարելի չնկատել, որ աշակերտները տարաբախտաբար սաստիկ թույլ էին շարադրութիւններ գրելում։

Տարուայ ընթացքում կատարուել են երեք դպրոցական աշակերտական հանդէսներ, 1. Վեհափառ Կաթողիկոսի օծման տարեդարձին, 2. Ս. Թադէոսի և Բարդուղիմէոսի տօնին և 3. Վարդանանց տօնին։

## ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախկին տարիների պէս այս տարի ևս դպրոցը ըստ կարելոյն օգնել է չքաւոր աշակերտներին։ Օժանդակութիւնը կատարուել է մի քանի ձևով. դպրոցը պահել է թոշակաւորներ, իւր հաշուով կերակրել է շատերին, ձրիաբար գրքեր և ուսման պիտոյք է բաժանել, և այլն։

1. Նախկին տարիներին դպրոցը պահում էր 30 թոշակառու, $189^5/_6$ տար. թոշակառուների թիւը հասաւ 40-ի, որոնցից մի մասը ստանում էր ամսական 7, իսկ միւս մասը 6 րուբլի։ $189^5/_6$ ուսումնական տարուայ ընթացքում դըպրոցը ծախսել է բոլոր թոշակառուների վրայ ընդամենը **2,880** րուբլի։

2. Դպրոցի հաշուով ճաշողների թիւը 20 էր, որոնց կերակրելը դպրոցին նստել է **1090** րուբլի։

3. Չքաւորների համար ուսուցիչները տարուայ ընթացքում տուել են իրանց ռոճկից **111** ր. **39** կոպէկ, որը նոյնպէս բաժանուել է նրանց։

4. Բարերար անձերի նուիրած գումարներից չքաւոր աշակերտներին օժանդակութիւն է տուած **417** ր. **88** կ.։

Այդպիսով մեր դպրոցի չքաւորները անցեալ տարուայ ընթացքում մօտաւորապէս 4,500 րուբլի օժանդակութիւն են ստացել։ Այս գումարից մօտ 4000 րուբլի դպրոցը ծախսել է իւր միջոցներից։ Եթէ ի նկատի առնենք և այն գումարը որը ծախսւում է որդեգիրների վրայ (մօտաւորապէս 7000

ռուբլի) կստանանք 11,000 ռուբլի, որը անցեալ տարի Ներսիսեան դպրոցը ծախսել է չքաւոր աշակերտների պահպանութեան համար։

## ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճիշտ տեղեկութիւններ տալ մեր բոլոր աշակերտների հիւանդութիւնների մասին, անկարելի է այն պատճառով, որ աշակերտների մեծագոյն մասը—այն է բոլոր երթեւեկները—բժշկուելու համար գնում էին քաղաքային բուժարան, ուր մեր աշակերտների համար առանձին հաշիւ չէր պահւում։ Երթեւեկներից տարուայ ընթացքում քաղաքային բուժարանում բժշկուել են 153 հոգի՝ համեմատաբար աւելի քիչ քան անցեալ տարի (240)։

Ինչ վերաբերում է որբեգիրներին՝ նրանց հիւանդութիւնների մասին կարելի է յայտնել հետեւեալ տեղեկութիւնները։

3 որբեգիր հիւանդացել են ոսկրացաւ հիւանդութիւնով։

4 որբեգիր հիւանդացել են անգինա հիւանդութիւնով։
2 » » տենդով։
2 » » բրոնխիտով։

2 ունեցել են արեան պակասութիւն։

Բացի սրանցից եղել են մի քանի դէպքեր կոկորդի հիւանդութեան, նեյրաստենիա (1 դէպք) և էպիլեպսիայ (1 դէպք)։

## ՈՐԲԵԳԻՐՆԵՐԻ ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑԸ

Որբեգիրների կենցաղավարութեան մէջ խոշոր փոփոխութիւններ չեն եղած։

Որբեգիրները վեր էին կենում աշնանը և գարնանը առաւօտեան ժամի 6 ին, կէս ժամ գործ էին դնում հագնուելու և լուացուելու համար։

$6^1/_2$-ին ժողովւում էին սերտարանում և աղօթք ասելուց յետոյ պարապում մի ժամ դասերով։

$7^1/_2$ ժամին թէյ էին խմում. իսկ $8^1/_2$-ին սկսւում էին դասերը։

11 ժամին որդեգիրներին տրւում էր նախաճաշիկ, որը բաղկացած էր լինում մի կտոր հացից և ձուից կամ պանրից։

$2^1/_2$ ժամին աշակերտները ճաշում էին, իսկ յետոյ հանգստանում։

$4^1/_2$ ժամին սկսւում էր երեկոյեան սերտողութիւնը, որը տևում էր մինչև 9 ժամը, ընդհատուելով երեկոյեան թէյը խմելու ժամանակ։ Ժամը 9-ին աշակերտները գնում էին քնելու։ Ձմեռը պարապմունքները $^1/_2$ ժամ ուշ էին սկսւում։

Որդեգիրների թիւը անցեալ տարի ևս եղել է 25։

Բացի դրանից $189^5/_6$ տար. դպրոցի վարչութիւնը ստիպուած եղաւ դպրոցի շէնութեան մէջ մի սենեակ յատկացնել 10 ամենաչքաւոր աշակերտներին, որոնք կատարելապէս զուրկ էին ապրուստի միջոցներից։ Այդ աշակերտները իրանց սենեակում միայն քնում էին, երեկոյեան որդեգիրների հետ դասերը պատրաստում էին սերտարանում, իսկ ճաշում էին էժանագին ճաշարանում։ Առաւօտները և երեկոները նրանց տրւում էր դպրոցում թէյ և հաց։ Այդ տասը հոգին ենթարկւում էին նոյն դիսցիպլինային և կարգ ու կանոնին, որոնք պարտաւորեցուցիչ են որդեգիրների համար։

---

$189^5/_6$ ուսումն. թ. շրջանաւարտները։

1. Աբովեան Տիգրան (նաև Քուլաղեան) Թիֆլիզեցի
2. Աւագեան Տիգրան Ղզլարեցի
3. Ալխանեան Իսահակ Թուշեթեցի

4. Գրիգորեան Յովսէփ — Սղնախեցի
5. Դիմաքսեան Մովսէս — Լոռեցի
6. Եարալեան Տիգրան — Թիֆլիզեցի
7. Երզնկեան Եզեկիէլ — Հաղբատեցի
8. Թանգեան Աստուածատուր — Խելթուբն. (Վրաստ.)
9. Խուցեան Սարգիս — Ախալքալաքցի (Գօրի)
10. Կիրակոսեան Սեդրակ — Թիֆլիզեցի
11. Ղորխմազեան Աբէլ — Ղարսեցի
12. Ղահրիմանեան Մարտիրոս — Նուշուայ գաւառից
13. Յովսէփեան Յովհաննէս — Թիֆլիզեցի
14. Պապովեան Աղէքսանդր — Թիֆլիզեցի
15. Սաղոյեան Յակովբ — Ծուղրութ. (Վրաստ.)
16. Սարեան Գրիգոր — Թիֆլիզեցի
17. Վարդապետեան Խաչատուր — Ղարաբաղցի
18. Տէր-Մկրտչեան Սարգիս — Կողբեցի

---

## II.

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

| | Ուսուցչ. ազգան. | Ո՞ր դպրոցում և ե՞րբ է աւարտել ուսումը | Ո՞ր թ. է ծառայում նորա դպրոցում: | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|---|
| 1 | Բալաղեան Սամ. Տեսուչ | Օդեսայի համալսարան. 1889 | 1895 | Բուսաբանութ. Բնախօսութիւն |
| 2 | Աբուլեան Կարապետ | Ներսիս. դպրոց 1883 | 1887 | Երգեցողութ (և վերակացու) |
| 3 | Ալխազեան Յարութիւն | Թիֆլիզի Ա. գիմնազիոն 1870 | 1887 | Ռուսաց լեզու (և վերակացու) |
| 4 | Աղանեան Գիւտ քահանայ | Ներսիսեան դպ. 1873 | 1876 | Կրօն և Տօմար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Ասիլեան Միսակ | Ճեմարան 1881, և ազատ ունկնդիր Պետերբուրգի համալս. | 1886 | Հ. լեզ., Հ. պատ. և եկեղ. պատմ. |
| 6 | Բարխուդարեան Գէորգ | Դորպատի համալսար. (չի աւարտել) | 1875 | Ռ. պատ. և Ռ. աշխարհագր. |
| 7 | Գաղբաշեան Յ. | Ներս. դպ. և Տիւբինգենի համալս. 1893 | 1894 | Ուսումն. սբ. Գրոց Եկեղեց. պատմ. |
| 8 | Եկմալեան Մակ. | Պետերբուրգի Կոնսեր. 1887 | 1891 | Եկեղեցական երգեցողութիւն |
| 9 | Ջոհրաբեան Յ. | Կիևի համալս. 1883 | 1884 | Մաթեմատիկայ |
| 10 | Թիւսիկեան Լևոն | Ներս. դպ. և Պետերբուրգի համալս 1873 | 1886 | Թուաբանութ. և Կենդանաբան. |
| 11 | Լիսիցեան Ստեփան | Վարշաւի համալ. 1889 | 1894 | Հայոց և ընդ. պատմութիւն |
| 12 | Մալխասեան Ս. | Պետերբ. համալսար. 1889 | 1890 | Հայոց լեզու և Հայ մատենագր. |
| 13 | Մանդինեան Ամիրան | Ներս. դպ. և Լազար. ճեմ. լից. 1869 | 1870 | Աշխարհագրութիւն |
| 14 | Մանուէլեան Ղ. | Մոսկվ. համալ. 1890 | 1894 | Ռ. լեզու և Տեսութ. մատենագ. |
| 15 | Մելիք-Ալլահվերդեան Աղէք. | Մոսկվ. համալ. 1886 | 1888 | Ֆիզիքա և Բնախօսութիւն |
| 16 | Միրզոյեան Գաբ. | Ղազանի համալս. (չի աւարտել) | 1887 | Ռուսաց լեզու |
| 17 | Յարութիւնեան Իսահակ | Ներս. դպ. և Ենայի համալս. 1888 | 1888 | Հ. լեզ., Հոգեբ. և տրամաբան. |
| 18 | Յովհանջանեան Խաչատ. | Խարկովի համալ. 1889 | 1895 | Մաթեմատիկայև Տիեզերագր. |
| 19 | Շահբուդաղեան Գրիգոր | Ներս. դպրոց 1879 | 1880 | Կրօն և Հայոց լեզու |
| 20 | Շամշինեան Յ. | Պետերբ. Գեղար. ճեմ. | 1884 | Նկարչութիւն |
| 21 | Պռօշեան Պերճ. | Ներս. դպրոց 1855 | 1887 | Կրօն |
| 22 | Սահակեան Սահակ քահանայ | Ներս. դպ. և Լայպցիգի համալս. 1883 | 1883 | Կրօն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23 | Սպարապետեան Արշակ | Ներս. դպրոց 1882 | 1882 | Գծագրութ. (և վերակացու) |
| 24 | Ցարյ Նիկողա-յոս | Փարիզի արևել. լեզ. Բարձ. դպրոց 1876 | 1884 | Ֆրանսերէն |
| 25 | Փիրումեան Տիգ-րան | Ներս. դպրոց 1879 | 1894 | Հայոց լեզու |
| 26 | Քէրէստէճեան Մարտիրոս | Խալիպ. ուսումն. 1859 | 1887 | Գեղագրութիւն |
| 27 | Քոչարեան Ցա-կոբ | Մոսկվ Համալս. 1888 | 1890 | Ռուս լեզու և ընդ. պատմ. |

Այսպիսով 189$^5/_6$ ուսումնական տարուայ ընթացքում Ներսիսեան դպրոցը ունեցել է 27 ուսուցիչ, որոնցից 16 հոգի կամ 59$^0/_0$ բարձրագոյն դպրոց են աւարտել, 6 հոգի-աւարտել են Ներսիսեան դպրոցը։ Բացի այդ, բարձրագոյն ուսում ստացածներից 5-ն առաջ քան Համալսարան մտնելը աւարտել են Ներսիսեան դպրանոցը։

Հաշուետուութեան տարում ուսուցչական խմբի մէջ ոչ մի փոփոխութիւն չի եղել։

Ուսուցիչներից 14 հոգի, բացի դասերից, կատարել են դաստիարակների պաշտօն առանց վարձատրութեան։ Ամեն մի դաստիարակի յանձնուած է եղել մի դասատուն և նա պարտաւոր է եղել իւր դառատան աշակերտների վրայ հսկողութիւն ունենալ։

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՑ ԹՈՂԱԾ ԴԱՍԵՐԸ.

189$^5/_6$ տարուայ ընթացքում ուսուցիչներից մի քանիսը երկար ժամանակ հիւանդ են եղել, և դրանք են պ. պ. Գաբրիէլ Միրզոյեան, Միսակ Ասիլեան և Մակար Եկմալեան։ Մանաւանդ շատ դաս է բաց թողել վերջինս. 622 դասից, որ պէտք է պարապէր տարուայ ընթացքում, բաց է թողել 146 դաս կամ դասերի 23$^0/_0$։

Մյուս ուսուցիչները անհամեմատ աւելի քիչ դաս են բաց թողել։ Դասեր բաց թողնելու պատճառը եղել է հիւանդութիւնը, ընտանեկան գործերը կամ դատարան կանչուելը և մի խօսքով ըստ մեծի մասին յարգելի պատճառներ։ Անհամեմատ աւելի փոքրաթիւ են այն դէպքերը, երբ ուսուցիչները դաս են բաց թողել ոչ յարգելի պատճառներով։

Գաղափար տալու համար, թէ ինչպէս են յաճախել դասերին ուսուցիչները, առաջ եմ բերում հետևեալ աղիւսակը, որից պարզ երևում է, թէ մեր դպրոցի ուսուցիչները սեպտեմբերից սկսած քանի դաս են տուել, քանի դաս պէտք է տային. որքան դաս են բաց թողել, քանի անգամ դասերից ուշացել են և այլն։ Տեղեկութիւնները բերուած են և առանձին առանձին՝ ամեն մի ամսուայ համար և ընդհանրապէս ամբողջ տարուայ համար։

Աղիւսակից երևում է, որ ամբողջ տարուայ ընթացքում մեր բոլոր ուսուցիչները պէտք է 11,040 դաս պարապէին, մինչդեռ պարապել են 10,448 դաս, այսինքն բոլորը միասին ամբողջ տարուայ ընթացքում բաց են թողել 652 դաս, որ կազմում է 11,040-ի մօտաւորապէս $5\%$։

Ուսուցիչներից չորսը՝ պ. պ. Զոհրաբեանը, Յարութիւնեանը, Յովհանջանեանը և Փիրումեանը ամբողջ տարուայ ընթացքում ոչ մի դաս բաց չեն թողել։

Միևնոյն ժամանակ ուսուցիչներից շատերը չէին զլանում աւելորդ դասեր պարապել, թէև գիտէին, որ $189^5/_6$ տարուանից աւելորդ պարապած դասերի համար չեն վարձատրուելու՝ համաձայն Հոգաբարձութեան որոշման։

Հետաքրքիր է նաև աղիւսակի վերջին սիւնեակը, որը ցոյց է տալիս, թէ ուսուցիչները քանի անգամ են ուշացել իրանց դասերին։

$189^5/_6$ տար. ուսումը սկսուեց սեպտեմբերի 11-ին և վերջացաւ մայիսի 10-ին՝ համաձայն Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեան։

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎ

$1895/_6$ տարուայ ընթացքում մանկավարժական խորհուրդը ունեցել է 29 նիստ (Օգոստոսի 29-ից մինչև Մայիսի 25-ը)։ Նիստերին ներկայ եղող անդամների մեծագոյն թիւը եղել է 24, փոքրագոյնը 15, իսկ միջին թւով ամեն մի նիստում եղել են 20,3։ Բոլոր նիստերին ներկայ են եղել— պ. պ. Բալաղեան, Մալխասեան, Լիսիցեան, Յարութիւնեան և Քոչարեան։ Բացակայել են նիստերին—

1 անգամ՝ պ. Ալխազեան։
2 » պ. պ. Մանուէլեան և Աբուլեան։
3 » պ. պ. Զոհրաբեան և Յովհանջանեան։
4 » պ. Դաղբաշեան։
5 » պ. պ. Տէր-Յարութիւնեան և Մանդինեան։
7 » պ. պ. Բարխուդարեան, Պռօշեան, Փիրումեան և Թիւսիկեան։
10 « պ. Ասիլեան։
11 › պ. Սպարապետեան։
12 « պ. Մելիք-Ալլահվերդեան։
14 » հ. Սահակ ք. Սահակեանց և պ. Միրզոյեանց
15 « պ. Շամշինեան։
20 » հ. Գիւտ քահանայ Աղանեան և պ. պ. Եկմալեան և Նահրուդաղեան
23 « պ. Քէրէստիճեան։

Մանկավարժական ժողովը այս տարի, բացի հերթական սովորական խնդիրներից՝ պարապել է հետեւեալ խնդիրներով. 1. Թոշակառուներ ընտրելու հարցը, 2, Գրականական երեկոների կազմակերպութեան, 3, Զքաւոր աշակերտներին նպաստելու, 4, Աշակերտների պարապմունքների ծանրաբեռնութեան թեթեւացնելու, 5, Աշակերտների ընթերցանութեան գործը կարգաւորելու և ընթերցանելե

գրքերի ցուցակներ կազմելու և 6, Ղամբարեանի մրցանա-
կի խնդիրները․․․։

Մանկավարժական ժողովը իւր միջից ընտրել է երկու
մասնաժողով, որոնք տեւչի նախագահութեամբ ունեցել են
իրանց առանձին նիստերը և գործել են երկար ժամանակ։

Մի մասնաժողովը ընտրուած է եղել գրականական ե-
րեկոների կազմակերպութեան համար, որի մասին առիթ ու-
նեցայ վերևը խօսելու։ Միւս մասնաժողովին յանձնուած է
եղել մանկավարժական ժողովի կողմից՝ աշակերտների ընթեր-
ցանութեան գործի կանոնաւորումը։ Այդ մասնաժողովը ընտ-
րել է մեր գրադարանի գրքերից յարմարաւորները և բաժա-
նել նրանց ըստ դասարանների։ Այժմ ամեն մի աշակերտ
չի կարող կարդալ այն ամենը, ինչ որ ցանկանում է և որը
գուցէ վեր է նրա զարգացման աստիճանից, այլ պէտք է
ընտրէ ընթերցանելի գիրք այն ցուցակից, որը կազմուած է
նրա դասարանի համար։

Տեսուչ Սամուէլ Բալաղեանց։

## 'ՏՆՏԵՍԱԿԱՆ

*Առ 1-ն յունուարի, 1897 ամի.*

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի նիւթական աղբիւրները հետևեալներն են.

### Ա. *Անշարժ կալուածքներ*

| | Տարեկան եկամուտ: Ռ. | Կ. |
|---|---|---|
| 1. Հին դպրոցական տունը, որ կառուցել է անմահ հիմնադիր Ներսէս Ե. կաթուղիկոսը . | 10900 | — |
| 2, Հին դպրոցի հանդէպ 21 կրպակները, որոնք սեփականացրած են նոյնպէս Ներսէս կաթուղիկոսից: . . . . . . . | 8150 | — |
| 3, 21 կրպակներ հին դպրոցի հրապարակին կից . . . . . . . | 4245 | — |
| Այս վերջին կալուածքների գետինը սեփականացրել է դպրոցին Մատթէոս կաթուղիկոսը: | | |
| 4, Այժմեան դպրոցական տունը, որ գնել է հոգաբարձութիւնը 1856 թ. . . . . | 1181 | — |
| 5, Կալուածք, որ ընծայել է Աւետիք Փիրոյեանցը . . . . . . . | 14229 | — |
| 6, Կրպակ՝ ընծայած Գրիգոր Տէրգիլեանցից | 200 | — |
| 7, Կրպակ՝ ընծայած Օթար Շաղբաթեանից | 240 | — |
| 8, Տուն՝ ընծայած Ստեփանոս Գուլիփաշեանցից . . . . . . . | 240 | — |
| 9, Կալուած՝ ընծայած Յարութիւն Օքոյեանցից . . . . . . . | 1310 | — |

10, Տուն՝ ընծայած Աբրահամեանցից . . 348 —
11, Տուն, որ գնել է Հոգաբարձութիւնը Ռոտինեանցից . . . . . . . 84 —
12, Տուն՝ ընծայած իշխան Յովսէփ Արղութեանցից . . . . . . . . 1200 —
13, Դպրոցական դատարկ գետինը . . 732 —
Այս կալուածքները գտնուում են Թիֆլիզ քաղաքի զանազան մասերում։
14 Այգի՝ ընծայած վրաց իշխան Օթար Ամիլախուարուց Սողանլուխում։ . . . 120 —
15, Այգի՝ ընծայած Ստեփան Ղամբարեանից Թէլէթում։ . . . . . . 10 —
16, Կրպակ Թէլէթ ուխտատեղու . . 352 —
43541 —

Մինչև յունվարի 1-ը 1897 թ. անշարժ կալուածքների եկամուտն էր 40190 րուբլի, ուրեմն այս տարի դպրոցը կը ստանայ աւելի 3351 րուբլի, այն պատճառաւ, որ դպրոցի սեփականութիւն դարձաւ իշխան Արղութեանի տունը և մի քանի կալուածքների կապալավարձը աճրդախօսութեան ժամանակ բարձրացաւ։

Բ. *Մոմավաճառութիւն և ուխտատեղիք.*

1, Ներսէս Ե. կաթուղիկոսը յատկացրել է ուսումնարանին նաև Թիֆլիզի թեմի մոմավաճառութեան արդիւնքը, որ այժմ բերում է կապալադրամ տարեկան . . . . . 6700 —

Նախընթաց տարիներում մոմավաճառութեան արդիւնքն էր 9500 րուբ. բայց Հոգաբարցութիւնը աչքի առաջ ունենալով, որ անմաքուր մոմից սաստիկ ծուխ է գոյանում եկեղեցիներում, պարտաւորեցրեց կապալառուին մոմեր պատրաստել զուտ և մաքուր մեղրամոմից, առանց խառ-

նուրդի, որի ծախսը շատ լինելով՝ պէտք է որ արդիւնքն էլ պակասէր։

2, Ներսէս կաթուղիկոսը յատկացրել է ուսումնարանին և Թիֆլիզի թեմի ուխտատեղինե-րի արդիւնքը, որը տարեկան հասնում է մինչև 6700 —

Հանած ծախքը . . . . . 3635 —

Զուտ արդիւնք մնում է . . . 3065 —

Այդ ուխտատեղիներն են.—Թէլէթ, Շաւնաբաթ, Ծաղկէվանք, Կրծանիս, Շուլնդիս, Բօլնիս, Շամշուլդա և այլ ուխտատեղիք թեմում։

Գ. *Անձեռնմխելի գումարներ բարերարներից.*

Ստացած կտակներով, որոնք %-բեր թղթերով պահպանւում են Արքունական բանկի Թիֆլիզի բաժնի մէջ.—

Առ 1-ն յունվարի 1897 ամի (չհանած %%-ով)

1, Գումար Յովսէփ Էփէնդեանցից . . 72186 68

2, » Եկատերինէ Ռօտինեանցից . 894 38

3, » Երդուեալ հաւատարմատար Վարդան Եղիազարեանցից իւր հօր յիշատակին . 100 —

4, » Գօրու քաղաքացի Եսայի Տէր-Դաւթեանցից . . . . . . 2600 —

5, » Թիֆլիզի քաղաքացի Սողոմոն Վարդանեանցից . . . . . . 4400 —

6, » Թիֆլիզի հայ հասարակութիւնից Մակար կաթուղիկոսի անունով . . . 3700 —

7, » Դզլարեցի Ա. կարգի վաճառական Մինաս Սամուէլեանցից . . . . . 3630 —

8, » Այրի Վարվառէ Երուսալիմսկուց 5601 69

9, » Թիֆլիզի արհեստաւոր Օթար Շաղբաթեանցից. . . . . . 200 —

10, » Եսայի Արք. եպիսկոպոս Աստուա-

Ծատուրեանցից . . . . . 8574 98

Եսայի Արք-եպիսկոպոսի 5000 ռուբ. գումարը պէտք է դպրոցը շահեցնէ մինչև որ 10000 ռուբ. հասնի, այնուհետև 5000 ռուբ. ինքը Արք եպիսկոպոսը պէտք է ստանայ, իսկ 5000 ռուբ. մնայ դպրոցին։

11, » Թիֆլիզեցի կօլլեժսկի սովետնիկ Աղէքսանդր Թայիրեանցից . . . 1888 05

12, » Թիֆլիզի տոհմական պատուաւոր քաղաքացի Գէորգ Փրիդոնեանցից . . 5000 —

13, » Թիֆլիզի Ա. կարգի վաճառական Գրիգոր Տիոյեանցից . . . . . 5000 —

14, » Այրի Մայրայ Փուղինեանցից . 873 17

15, » Մարիամ Սերեգենկոյից . . 819 34

16, » Ղազախեցի Նաքար Եարալեանցից 1023 69

17, » Հանգուցեալ Յովհաննէս Անանեանից յանուն Ալամդարեանցի . . . 5000 —

18, » Նունէ Ղամբարեանցից . . 3706 02

19, » Թիֆլիզի պատուաւոր քաղաքացի Յարութիւն Գրիգորեանցից . . . 6300 —

20, » Թիֆլիզի հասարակութիւնից և յիշատակ Յովհաննէս ա. ք. Սարգսեանցի . 1203 —

21, » Նուիրաբերութիւններ յանուն երգեցիկ խմբի . . . . . . 136 47

22, » Բագուեցի Գրիգոր Թումայեանից 5000 —

23, » Տիկին Եկատերինէ Մելիք-Շահնազարեան Դէ Շապուրից . . . . 2053 25

24, » Ագուլեցի Ստեփան Գէորգեանի ժառանգներից . . . . . 5132 28

25, » Նունէ Եւանգուլեանցից . . 9775 —

Ընդամենն . 154798 —

Տիկին Եւանգուլեանցի գումարն է 10000 ռուբ., որը

և լրացրին կտակատարները չընթացս այս տարուայ յունուար ամսի

Այս գումարների %-ով, բացի Ղամբարեանցի և Եսայի Արք-եպիսկոպոսի ընծայաբերութիւններից, պահպանւում են որդեգիրներ և չքաւոր երթևեկ աշակերտներ, իսկ Ղամբարեանցի գումարի տոկոսիքը, համաձայն կտակի, յատկացրած է իբրև մրցանակ ամենալընտիր աշխատութիւնների, գրած հայերէն Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան մասին։

Դ. *Գումար յանուն նոր շինութեան դպրոցի*

| | | |
|---|---|---|
| Դպրոցի նոր շինութեան համար եղել են ընծայաբերութիւններ զանազան բարերարներից. | 9177 | 57 |
| Դպրոցը յատկացրել է իւր խնայած միջոցներից | 53716 | 38 |
| Այսպէս ուրեմն դպրոցն ունի շինութեան անունով . . . . . . . . | 62893 | 95 |

Այդ գումարը գտնւում է Թիֆլիզի զանազան բանկային հիմնարկութիւններում։

Բացի այս աղբիւրներից դպրոցին նուիրել է տուն Աստրախանում պ. Մահտեսի-Բէժանեան Յարութիւնեանցը, որը դառնալու է դպրոցիս սեփականութիւն կտակողի մահից յետոյ։

Դպրոցը ստացել է և երեք կնքած ծրար մեծարգոյ պ. պ. Յարութիւն Շամխարեանից, Արտէմ Իւզբաշեանից և Գրիգոր Բայանդուրեանից. այդ ծրարները պէտք է բացուեն կտակողների մահից յետոյ. ծրարները գնահատութեամբ 3000 րուբլու, պահվում են Թիֆլիզի առևտրական բանկում։

| | | |
|---|---|---|
| 1896 թ. դպրոցը ունեցել է մուտք անշարժ կալուածքներից, ուխտատեղիներից, մոմավաճառութիւնից, % անձեռնմխելի գումարներից որդեգրների պահպանութեան համար և անակընկալ | 62337 | 44 |

Նոյն թուականին եղել է ծախք որդեգրների, չքաւոր աշակերտների պահպանութեան, ռոճիկ տեսչի, ուսուցիչների և ծառայողների, Թօշակագրամ չքաւոր աշակերտների, գրադարանի, կալուածքների նորոգութեան, ապահովութեան, հանդերձեղէնի որդեգրների համար, մանր ծախք և այլն . . . . . . 70483 37

Այդ գումարից տեսչի, ուսուցիչների և այլ ծառայողների ռոճիկ եղել է՝ . . . . 37154 —

Այդպիսով ծախսը մուտքից 8145 րուբլի 93 կոպէկ աւելի է։ Այդ դէֆիցիտը ծածկելու համար, որը առաջ է եկել անշարժ կալուածների վրայ անհրաժեշտ վերանորոգութիւններ անելուց տարուայ նախահաշուից դուրս, հոգաբարձութիւնը առանձին կարգադրութեամբ վերցրել է յանուն շինութեան ունեցած դպրոցի գումարից 10000 րուբլի, որից առ 1-ն Յունվարի 1897 թ. դեռ չը ծախսված մնում է 1854 րուբլի 7 կոպէկ։

1897 թ. նախահաշուով սպասվում է.—

Մուտք . . . . . . 64941 —

Ծախք . . . . . . . 64919 —

1, Առ 1-ն յունուարի 1897 թ. գանձարանում երևեցաւ . . . . . . 235441 25

Սրա մէջ են անձեռնմխելի գումար.—

Տոկոսներով . . . . . . 154798 —

2, Յատկացրած դպրոցի նոր շինութեան . 62893 95

3, Գրաւական կապալառուներից ստացուած 15895 23

Եւս վերոյիշեալ մնացորդ շարժական գումարից առ 1-ն յունվարի 1897 թ. . . . 1854 07

[ 584. ]



Ա II 68020

Հազարարձումեան խորհրդարանի դիւան

1) Թուղթ եկեալ — 732.

2) » ելեալ — 1129.

3) Օրագրներ — 40.

4) Կազմած գործեր — 61.

Հոգաբարձական ժողովներ — 40

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.